



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
**ՀՐԱՄԱՆ**

« 5 » սեպտեմբերի 2011թ.

№2061-Ն

*« Գրանցված է »*

ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից

13 հոկտեմբերի 2011 թ.

Պետական գրանցման թիվ 12411443

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 4-Ի N 01/13 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի 71-րդ հոդվածը՝

*Հրամայում եմ՝*

Հաստատել Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1999  
թվականի մարտի 4-ի «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման  
կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 01/13 հրամանում կատարվող  
փոփոխությունները և լրացումները՝ համաձայն հավելվածի:

Նախագահ՝

Գ. Խաչատրյան

*Համաձայնեցված է  
ՀՀ ֆինանսների նախարարության  
հետ  
26 սեպտեմբերի 2011 թ.  
N 685-Ն հրաման*

*Հավելված  
ՀՀ կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների  
կոմիտեի նախագահի  
5 սեպտեմբերի 2011թ.  
N 2061-Ն հրամանի*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի «ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 01/13 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

Հրամանով հաստատված հրահանգում`

1. Հրահանգի 9.2-րդ կետում «Սույն կետով նախատեսված գրո տոկոս դրույքաչափով շահաբաժինների հարկումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի «Հարկման արտոնյալ ռեժիմներ ունեցող պետությունների կամ դրանց մասը կազմող տարածքների ցանկը սահմանելու մասին» N 1542-Ն որոշմամբ սահմանված ցանկում ընդգրկված` շահաբաժինների հարկման արտոնյալ ռեժիմներ ունեցող պետությունների կամ դրանց մասը կազմող տարածքների ռեզիդենտ հանդիսացող կազմակերպությունների շահաբաժինների վրա:» նախատեսությունը հանել:

2. Հրահանգի 11.1-րդ կետի 6-րդ ենթակետում «օրենքով սահմանված ներկայացման ժամկետից սկսած» բառերը փոխարինել` «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներկայացման ժամկետից սկսած» բառերով:

3. Հրահանգի հավելված 2-ում`

1) «Ոչ ռեզիդենտի տարեկան եկամուտների մասին» հաշվարկում`

ա. 0242 տողում «կրած կորուստները (բաշխված կորուստներ)» բառերը փոխարինել «կրած կորուստները (այդ թվում` բաշխված կորուստները)» բառերով.

բ. 0800 տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

<b>«8. Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները</b>	<b>0800</b>	( )»
--	-------------	------

գ. հաշվարկը լրացնել հետևյալ բովանդակությամբ աղյուսակ 1-ով`

**«Աղյուսակ 1. Եկամուտները` ըստ գործունեության տեսակների**

Գործունեության տեսակը (կոդը)				Տեսակարար կշիռը (%)
բաժին	հատված	խումբ	դաս	

					»:

2) «Ոչ ռեզիդենտի տարեկան եկամուտների մասին հաշվարկի լրացման» ցուցումներում՝

ա. 2-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) Հաշվարկի 2.4-րդ ենթաբաժնում («Ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար») ցույց են տրվում ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կատարված ծախսերը և կրած կորուստները (այդ թվում՝ բաշխված ծախսերը և բաշխված կորուստները)՝ Օրենքի 56-րդ հոդվածին համապատասխան: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում:

0241 տող՝ ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կատարված ծախսերը (այդ թվում՝ բաշխված ծախսերը): 0242 տող՝ ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կրած կորուստները (այդ թվում՝ բաշխված կորուստները): 0245 տող՝ ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կատարված ծախսերի և կրած կորուստների (այդ թվում՝ բաշխված ծախսերի և բաշխված կորուստների) ընդհանուր գումարը՝ որպես 0241-ից 0242 տողերի հանրագումար:»:

բ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. Հաշվարկի 9-րդ բաժնում («Շահութահարկի գումար՝ արտոնությունները կիրառելուց հետո») և 0900 տողում ցույց են տրվում շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց հետո՝ որպես 0700 և 0800 տողերի հանրագումար (եթե [տող0700]+[տող0800]<0, ապա =0):»:

գ. ցուցումները լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ կետով՝

«13. Աղյուսակ 1-ում նշվում են հաշվետու տարում ոչ ռեզիդենտի ըստ գործունեության տեսակների ստացված եկամուտների տեսակարար կշիռները (տոկոսով) համախառն եկամտի մեջ (ըստ տեսակարար կշիռների նվազման), ընդ որում՝ «Գործունեության տեսակը (կողը)» սյունակում գործունեության տեսակները (կողերը) նշվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» N 372-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին համապատասխան (օրինակ՝ C2591 կողը /բաժին C, հատված 25, խումբ 25.9, դաս 25.91/ համապատասխանում է «Մետաղական տակառների և համանման այլ տարողությունների արտադրություն» գործունեության տեսակին»), իսկ «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ: Աղյուսակ 1-ում նշված տեղեկությունները օգտագործվում են վիճակագրության

նպատակով և չեն կարող հիմք հանդիսանալ շահութահարկի հաշվարկման (վերահաշվարկման) համար:»:

---